

մէջէն կը թափթըփէր: Դիտուած ջերմութեանց մէջէն այս ամենէն սաստիկն էր:

Ճոյ երեկոյեան գիշերօթիքը առջի օրուան պէս պատրաստեց, և տոբզորին ու ֆէննրտիին հսկման քառորդները ամենեկին նոր գէպք մը չպատահեցաւ:

Սակայն առաւօտեան ժամը իրեքին ատենները, մինչդեռ Ճոյ կը հսկէր, յանկարծ զգալի կերպով ջերմութիւնը նուազեցաւ. երկինքը ամպերով զոյգուեցաւ ու մթութիւնը սաստկացաւ:

— Հապա զարթիք, կանչեց Ճոյ իր երկու ընկերներն արթնցնելով, ելէք, ահա հովը կը սկսի:

— Վերջապէս, ըսաւ տոբզորը երկինքը դիտելով. սակայն փոթորիկ մըն է: Վիկտորիա փութանք, Վիկտորիա փութանք:

Անոր հասնելու ժամանակն էր: Վիկտորիան փոթորկին սաստկութեամբը գետինը կը հակէր զնաւակը հետը քաշքըռտելով՝ որ աւազին վրայ գիծ մը փորելով կը քալէր: Եթէ զիպուածով մէջի աւազին մէկ մասը գետինը թափուէր, գունտը կ'ելլէր կ'երթար, և այնուհետև զայն նորէն գտնելու յոյսը ունայն կ'ըլլար:

Սակայն երազաշարժն Ճոյ բոլոր ու ժովը վազեց ու նաւակը բռնեց, մինչդեռ օդապարիկը պատռտուելու վտանգաւ աւազին վրայ կը պառկէր: Տոբզորն իր սովորական տեղն անցաւ, բոցարծարծը վառեց ու ծանրութեան աւելորդը գուրս թափեց:

Ճանապարհորդը յետին անգամ մըն ալ ովասիսին ծառերուն նայեցան ուրոնք փոթորկին սաստկութեամբը գետինը կը ծռէին, և շուտ մը գետնէն երկու հարիւր ոտք բարձրութեամբ՝ արևելեան քամիին իրենք զիրենք տալով, մութին մէջ անյայտ եղան:

Կը շարունակուի:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱԾԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

(Տես էրես 83:)

Կաթնտոշք (շարունակութիւն):

Մեր հանգստովը շարունակենք քըննելու կաթնտուաց կարգերը: Ուրիշներու վրայ գիտութեան աւելի կարևոր տեղեկութիւններ գտնենք պիտի. սակայն քեզի նկատմամբ աւելի հետաքրքրական տեղեկութիւն գտնելու չենք:

Ե. Միջառակերք:

Ասոնք միջատները կ'ուտեն. իրենց անունն ալ յայտնի կը վկայէ: Զղջիկան պէս կը սնանին. հետեւաբար ալ մի և նոյն աղօրիք ակռաներն ունին. այդ բանը հարկ մըն էր: Ասոնք պզտի ցեղ կենդանիք են, և ոչ այնչափ կարևոր, որուն համար ժամանակնիս կորսնցընելու չենք: Խումբին զլուխը՝ ողնին է, մեր աշխարհին կենդանի մը, ոչ շատ մեծ, — 9 բթաչափ երկայնութիւն ունի, — որ անտառներուն մէջ կ'ապրի, և իր փուշերովը, երբ կը կլորի, կճեպին մէջ պատած մեծ շագանակի մը նմանութիւնը կ'առնու: Ասոր շնատամուռքը մեծ գործ մը չունին ընելու, անոր համար ալ ամենը փոքր են. սակայն անոր փոխանակ իր առաջին երկու հերձատամուռքը միւսներէն շատ աւելի երկայն են, որպէս զի լաւագոյն կերպով կարենայ գետնէն քալող որսը բռնել: Ներսէն ամենեկին մասնաւորութիւն մը չունի: Ասոր քովը նշանակելու եմ իբր հետաքրքրական մէկ մը, Աւազամուկը, կամ աւազուտից մուկը, որ իր անուամբը հանդերձ՝ մուկ

մը չէ, սակայն ծանօթ կաթնտուաց մէջէն ամենէն պզտիկն ըլլալու պատիւն ունի, եթէ կայ արդարեւ այդպիսի պատիւ մը: Ընդ ամենը երկու թաշափ երկայնութիւն ունի, և եթէ անոր պըզտի մարմնոյն մէջ աղէկ նայիս, ինչ որ 'ի քեզ գտանք, ամենեւին նոյն բաները նաեւ անոր մէջ ալ կը գտնես, որկոր, ստամոքս, լեարդ, աղիք, երակք, շնչերակք, սիրտ, թոք, ամենեւին բան մը պակաս չկայ. կատարեալ նոյն մեքենայն է:

2. Կրճողք:

Այդպիսի անուններ ախորժելի են, վասն զի մէկէն կը հասկցուի թէ ինչ կ'ուզեն նշանակել: Կրճողք մկներն են, նապաստակները, ճագարները, ջրշուք, մարմոդք, սկիւռք, միով բանիւ բոլոր այն կենդանիք որ կրճելով՝ կամ թէ ըսենք սկզբաներուն ծայրերովը կ'ուտեն: Կրճողք ուրիշ ուտելու կերպ չունին բայց եթէ իրենց իւրաքանչիւր ծամելիքին ծայրը եղած երկու հերձատամներովը ուտելիքին խարտոցելով: Այդ հերձատամները շատ երկայն են, և քան զոգնիկներն ալ երկայն: Առջի անգամուն որ ճագար ուտելու ըլլաք, խնդրէ որ քեզի գլուխը տան. չորս պզտի գեղեցիկ ակռաներ պիտի տեսնես, շատ հատու, որ հիւսան մկրատի նման կը տրած են:

Ահա քիչ քիչ կը սկսինք մեզի ծանօթ օրինակէն հեռանալ: Նախ ծնօտին յօդակապին կերպը տարբեր է: Այն զօդքն որ քիչ մը առաջ մնակերաց վրայ այնպէս քնքաց ոսկրին մէջ խորը խոթուած տեսանք, հոս երկայն ճեղքի մը մէջ կը սահին, և այս կերպ տրամադրութեամբ կենդանին հեշտեալ ծնօտը ետեւ առաջ կը տանի ու կը բերէ, ինչպէս դարբնի մը թւն որ ձեռքովը խարտոցը կը գործածէ: Յետոյ այդ պզտի ակռաներն որ մէկմէկու հետ շարունակ կը շփուին, շուտ մը կը մաշէին, եթէ մերիններուն նմա հաստա-

տուն չինուած ըլլային: Անոր համար իրենց բողբոջն կամ պտուկը, ցամբելու տեղ, ինչպէս կ'ըլլայ 'ի մեզ, ա. կռան մէյմը բուսներէն ետեւ, ողջ կը մնայ և կենդանւոյն բոլոր կենացը ժամանակը գործը կը շարունակէ: Երբեմն երկայն ատեն չկերող մարդոյ համար կը զուրցուի թէ ակռանին երկնցած ըլլայ: Այդ կատակաբանութիւն մըն է, որ ծանր հետեանք կ'ունենար եթէ խնդիրը կրճողի մը նկատմամբ ըլլար: Որովհետեւ անոր հերձատամները մեր ըզունդներուն նման, շարունակ երկն, նալու հետ են, շուտ մը չափէ աւելի երկայն կ'ըլլային եթէ քիչ մը ատեն չուտելով չմաշեցներ: Ատոր համար է որ մկունք միշտ ախորժակ ունին, և ամենայն ինչ 'ի դէպ կը գտնեն իրենց ակռաները անգործ չթողու համար, հին գրքեր եղեր է, հին լաթեր, մինչև նաեւ գետինն տախտակամածն իսկ, եթէ լաւագոյն բան չգտնեն: Ինչ ալ ըլլայ հարկ է ակռային ծայրը մաշեցնել, որ դիւր ըլլայ պտուկին գործողութեանն որ շարունակ զակռան աճեցնելով կ'երկնցընէ: Այդ լուեկայն ու շարունակեալ գործը կրնայ ահաւոր հետեանք մը ունենալ, որ մտքէդ ալ չէր կրնար անցնիլ: Օրիորդի մը համար շատ ցաւալի բան է եթէ իր առջևի ակռաներէն մէկը կորսնցնէ, վասն զի դիմացը վրայ տգեղութիւն մը կը բերէ. սակայն կըրծողի մը համար այդ բանը ամենամեծ չարիք մըն է, մահն ըսել է: Անոր համապատասխանող ակռան ալ բանի մը դէմ չչփուելով՝ մաշելէն կը դադարի, և որովհետեւ միշտ աճելու հետ է, անսահմանաբար կ'երկնայ, այնպէս որ վերջապէս բերնէն դուրս կը տնկուի և ինչպէս պատնէշ մը կը ձևանայ միւս երկու ակռաներուն ու կերակրելինաց մէջ: Կենդանին այնուհետեւ չկարենալով ուտել կը մեռնի:

Շնատամներն որ խայթելով ըմբռնելու որոշեալ են, խարտոցող ծնօտի մը վրայ ամենեւին ընելու բան մը չունին. անոր համար ալ անանկ ծնօտից վրայ չեն գտնուիր: Հերձատամնց և աղօ-

րեաց մէջ տեղ մեծ պարապ միջոց մը կայ զոր շատ աղէկ կրնաս գիտել ճազարիդ զլխուն վրայ :

Վերջապէս այնպիսի կենդանիք որ կերակրուելու համար երբեմն նաև տալ տակի մըն ալ դոհ կ'ըլլան, քան ըզմակերները շատ աւելի ընդարձակ գործանոցի մը պէտք ունէին այնպիսի կերակրոց պատրաստութեանը համար : Անոր համար է որ մուկը, որ այս կարգիս ամենէն կատարեալ օրինակն է, արտաքոյ կարգի երկայնութեամբ մարսողական մը ունի, որուն մէջ փայտին տաշուքը երկայն ժամանակ կը ճանապարհորդէ, որպէս զի իր մէջը բովանդակուած սննդարար փշուրները կարենան բոլորովին բաժնուիլ . և որովհետև կենդանական գործարանակազմութեւնը մէջ ամենայն ինչ մէկմէկու հետ շաղկապեալ է, բնութիւնը, որպէս զի այդ անյագ կրծողը յարատև շատակերու թեան վիճակի մէջ պահէ, ինչպէս որ անոր անամոքելի պտուկը կը պահանջէ, ահագին մեծութեամբ սիրտ մը տուած է իրեն, որ քան զիր ստամոքսն իսկ մեծ է :

Գուցէ աղէկ չես ըմբռներ թէ ինչ վերաբերութիւն կայ սրտին տարածոցին և ախորժակին մէջ . և սակայն ատիկայ շատ պարզ է : Մեծ տակառներն որ շատ գինի ունին՝ ունեցողներուն համար են, այսպէս ալ մեծ սրտերն անոնց համար՝ որ շատ արիւն ունին : Արդ գիտես թէ արիւնն է որ կրակն ու կեանքը մարմնոյն ամեն գին կը բաշխէ : Երբ հեղեղաբար կը դիմէ կու գոյ, կրակը կը կրկնապատկի, և հետևաբար հարկ է ըստ այնմ ալ ուտել : Բարեկամ բժիշկ մը օր մը ինձի կը պատմէր թէ Մոնֆոգոնէն տուի մը լեցուն մկներ բերել տուեր էր, այնպիսի փորձ մը ընելու համար՝ որ եթէ գիտունք օգտակար հետեանք մը չհանէին հարկ էր անշուշտ յանդիմանել զանոնք : Յաջորդ առտուն հաղիւ թէ այն մկներէն մէկ քանին մնացեր էր . մէկզմէկ կերած էին : Եւ ահա ինչ ըսել է մեծ սիրտ ունենալը :

Է. Թանձրամորթ :

Թանձրամորթը՝ հաստ մորթ ունեցող կենդանիք են : Այդ անուանակոչութիւնը ինչպէս կը տեսնես, քիչ մը տարտամ է, և այս կենդանեաց նկատմամբ մեծ բան մը չիսորվեցներ մեզի . սակայն կ'երևայ թէ լաւագոյն մը գրտնել կարելի չէ եղած : Ես ալ, ստոյգն ըսելով, մեծ դժուարութեան մէջ կ'ըլլայի եթէ հարկ ըլլար անուն մը տալ այդպիսի անհամեմատ խումբի մը, ուր վրայէ վրայ զիջեր են երկրիս բոլոր մեծ կենդանիները, փիղը, ռնգեղջիւրն ու ձիազետին, զոյգ ընդ ձիոյն, իշուն ու խոզին :

Բոլոր այդ անասունք տունկերով կը սնանին, 'ի բաց առեալ խոզն որ ամենայն ինչ կ'ուտէ, և ամենակեր կ'ըսուի, և նմանապէս արջը, և ուրիշ կաթնատու մըն ալ, զոր հոս յիշել չեմ ուզեր, որ չըլլայ թէ այսպիսի ընկերաց քովը գրտնուելուն ամօթ կրէ : Ատիկայ ըսել է թէ թանձրամորթից կարգին մէջ մարսողական կազմարանը շատ ընդարձակ է : Ձին, օրինակի համար, շատ մեծ տարածոցով ստամոքս մ'ունի, անանկ որ որկորին բերնէն որ իր մէջը կը բացուի, շատ անգին կը ձգի, և նաև մօտանց նայելով մէջ տեղուանքէն սեղմուած կապուածի պէս է . անանկ որ կարծես թէ մէջտեղէն բաժնուած է, որով այնպէս մը կ'երևայ՝ ինչպէս թէ ձին երկու ստամոքս ունենար : Սակայն և ոչ այս բանիս մէջ ներքին էական տարբերութիւն մը կը գտնենք նշանակելու . այլ բուն ակռաներուն նայելու է որ ըսելու բան մը գտնենք : Բնութիւնը անոնց վրայ է որ իր հաճոյից աշխոյժը գործածեր է, որոնց վրայ մեր ընտրութեանը համեմատ կրնանք խօսիլ :

Փղէն սկիզբն ընելով, որ կարգիս մեծագոյն իշխանն է, մեզի ծնօտ մը կը ներկայացընէ որ ամենէն օտար կերպով յարգարեալ է : Ամենուն ծանօթ են

այս կենդանւոյս երկու ահագին պաշտպանութեան ժանիքները, որ բերնէն դուրս կը ցցուին, և մարդկային ճարտարութե գործածած փղոսկրին գրեթէ մէկ հատիկ աղբիւր են: Երկու ատամունք են ասոնք, որոնց մեծութեանը ուրիշ հաւասար բաղդատութիւն մը չկայ բոլոր կենդանական ազգին մէջ. ասոնք բուն զարդարանքի երկու ատամունք են, և ուտելու՝ բոլորովին աւելորդ, և ասկէ դուրս տիրոջն ալ փնասաբեր: Արեան ըրած բոլոր փղոսկրի նիւթին խնայութիւններն անոնց մէջ անցած են. և ինչպէս կը հանդիպի շատ անգամ անոնց որ ինքզինքնին զարդասիրութեան կու տան, ամենեւին բան մը չէ մնացեր իրեն բուն ակռայ չինելու համար: Փղին ժանիքներն ուրիշ բան չեն եթէ ոչ իր երկու վերին հերձատամունք, մի միայն ատամունք որ ծնօտէն ելլելով կոր ձև մը կ'առնուն: Վարի կողմը հերձատամն չկայ. իսկ շնատամունք ոչ վերի և ոչ վարի ծնօտը կը գտնուին. այլ իբր ակռայ այդ մերկ բերնին մէջ, ծնօտներուն իւրաքանչիւր կողմը երկու ահագին մեծութեամբ աղօրիք կան, որ փղոսկրեայ չեն: Ասոնք տեսակ մը եղջերային թիթեղք են, որ ոսկրուտ խիւսով մը մէկմէկու հետ կուռ կպած են, և այդ հսկային մէկ հատիկ օժանդակներն են որ խօտերը, թարմ ճիւղերն ու ծառոց տերէներն՝ որոնցմով կը սնանի, ըստ կարի

մանրէ: Իբր մխիթարութիւն աշխարհիս ամենէն գեղեցիկ ակռաներն ունենալու փառքն ունի, որ և իրեն մերձեցողներուն ալ զարհուրանքն են. ուստի և ես հոս լաւագոյն բաղդատութիւն մը չունիմ քան այն տիկնայց նմանցներու, որ գետնախնձորով կը կերակրուին որպէս զի մետաքսեայ զգեստներով իրենց դրացիները նախանձեցներու հաճոյքն ունենան:

Ձիագետին ալ նմանապէս վերին հերձատամունք ունի, որ բերնէն դուրս ելլելով կը կորանան, սակայն փղին ժանեաց երկայնութեանը ամենեւին չեն հաւասարիր: Անոր համար ալ միւս ատամանց բուսներուն արգելք մը չեն ըլլար: Վերի հերձատամունք դէպ 'ի վար կորացած են. վարինները շիտակ դէպ 'ի առջևը պառկած են, և ինչպէս արօրի մը խփը սրածայր կը վերջանան. և յիշաւի ալ գետինը փփրելու կը ծառայեն, այն արմատները հանելու համար որոնցմով ձիագետին կը սնանի: Սակայն ահեղ ակռաներ են. կատաղութեան ժամանակ՝ ամբողջ նաւակներ կը ջախջախէ անոնցմով. որովհետեւ, զխոնալու ես որ գրեթէ երկկէնցաղ կենդանի մըն է, ջրային բոյսերը կ'ուտէ, և Ափրիկէի իր հայրենի երկրին մեծ գետերուն մէջ կ'ապրի:

Կը շարունակուի:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ